

17772

ԱԿԱՆԱԿ · ԸՆԹԵՐՑՈՂԻ  
ԳՐԱԴԱՐԱՆ

Գ. ԱԼԱԶԱՐ

# ԴԱՐԸ ԴԱՐԻ ԴԵՄ

Պատմակ Հրանտիսկառապուրակ  
Եօրեական

26 MAY 2005

06 DEC 2010

4-28

ԱԿԱՆԻ ՀԵԹԵՐՑՈՂԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Արմ.

2-111032

Վ. ԱԼԱԶԱՆ

# ԴԱՐԸ ԴԱՐԻ ԴԵՄ



Հ Ս Խ Հ  
ԳԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ Օ 1 9 3 6

Պատ. Խմբագիր՝ Ս ի ք ա ս  
Տեխ. խմբ. 3. Խաչվանքյան  
Մբրագիր՝ Հ. Դուլուխ անյան



Քետիկակի լիազոր Ա. հ. 2104, Պատվ. 563,  
Հրատ. 3701, Տիգրած 3000  
Գետիկակի տպարան,  
Երևան, Ա Գնունի, 4



Հանձնված ե արտադրության 7 մայիսի 1936 թ.  
Մասնագրված ե ապելու 4 հունիսի 1936 թ.

ԳԻՆԸ 55 ԿՐՊ.



3952-87

В. АЛАЗАН  
ВЕК ПРОТИВ ВЕКА  
Гиз. ССР Армении, Эреванъ, 1936 г.

## ՎԱՀՐԱՄ ԱԼԱԶԱՆ

Վ. Ալազանը ծնվել է Վանում 1903 թվին։ Նախ-  
նական կրթությունն ստացել է Վանի ծխական ռըպ-  
րոցում։

1915 թվին Վանի ազգաբնակության յէետ միա-  
սին գաղթում է Կովկաս և հաստատվում է Յերևա-  
նում։ Կարեքը հարկադրում է նրան պատանի հասա-  
կում աշխատանք վորոնել։ Նա դառնում է գրաչար  
և 6 տարի աշխատում է Յերևանի տպարանում։

1922 թվից նա ակտիվ աշխատանք է տանում  
կոմյերիտության շարքերում։

Ալազանի առաջին բանաստեղծությունը խմբա-  
պետ Նժղեհի դեմ, տպադրվել է 1921 թ. Խորհրդա-  
յին Հայաստանում։

Այնուհետև Ալազանն ունենում է բեղմնավոր գրա-  
կան գործունեյություն, աշխատակցում է բազմաթիվ  
թերթերի ու ամսագրերի։ Առանձին գրքով լույս են  
տեսել նրա 20 աշխատությունները։ Ալազանը բազմա-  
կողմանի ընդունակություններով ոժտված գրող է.  
Նա գրում է և չափածո (բանաստեղծություններ  
ու պոեմներ) և արձակ (մելք, պատմվածք)։

Ալազանը ակտիվ կերպով մասնակցելով մեր սո-  
ցիալիստական շինարարությանը, իր ստեղծագործու-

թյումների մեջ պատկերացնում ե այն պայքարը, այն  
ապրումներն ու ճշտումները, վոր հատուկ ե մեր ժա-  
մանակաշրջանի մարդուն:

Բացի գրական ստեղծագործական աշխատանքից,  
Ալազանը ակտիվ կերպով մասնակցում ե ու ղեկավա-  
րում ե մեր գրական կյանքը, առանձնապես ուշադրավ  
ե նրա աշխատանքը արևմտահայ բանաստեղծների  
(Դուրյան, Մեծարենց և այլն), ուսումնասիրման ու  
հրապարակման գործում. այս բոլորի հետ միաժա-  
մանակ նա իր հոգվածներով ուժեղ պայքար ե մղել  
դաշնակցության դեմ:

Ալազանի նշանակալից աշխատություններն են,  
«Յերգեր կառուցման և հաղթանակի», «Մաքառում-  
ներ», բանաստեղծությունների ժողովածուները, ապա  
«Վաթուուններորդ հորիզոնում», «Ճանապարհին» վեպե-  
րը, վորոնք պատկերացնում են մեր կյանքի առարկեր  
ետապները:

## ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԽՐԱՄԱՏԿԵՐՈՒՄ

Ա

## ՅԵՐԳ ՍԱՐԴԱՐԱԿԱՆ ՅԵՐԵՎԱՆԻ

1

Հրազդան դեմի ձախո ուսն ի վեր վորիլ եր  
Ճույլ՝

Սարդարական Յերեանը.

Այսուն, քրտինք, յերկրի սիրոն ու կյանքն եր  
Ճըծում—

Գոռող սարդար Հասան իսանը:

Ճուրջը նրա՝ թալար Քյոշկը, — վայելե, դինի,  
Հարեմական յերգն ու պարը,  
Դեմը նրա՝ Արարայտն դաշտի սէնին,  
Վրան դրած Մասիս սարը:

Կանաչ սլացքով, թալար Քյոշկի քովը կեցած,

Բըռունցքների նման ցըցուն—

Նստել են լուռ,— խոշտանդումի վորպես

արձան,

Մզկիթները՝ նայվածքով ցուրտ:

Մինարեներ են բարձրացել դեպի Ալլահ՝  
Նիզակների պես արնաներկ.

Շուրջը իրենց՝ չույլել են վերք ու պալար  
Յեվ փառքի պես ոլացել վեր:

Նրանք չոքած Հրազդան գետի սրտի վրա,  
Աղոթել են ու տարածվել.  
Աղոթքիցն այդ սավառնել ե մահը մռայլ—  
Թևերովն իր ծըլեն-ծըլեն:

Հյուղեր կուրաչք, — կյանքի, մահու  
փոթորկում մեծ,  
Խարիսափել են մութ, անարկ.  
Դեմը նրանց՝ ազահությամբ փառք են խմել—  
Պալատ ու քյոչկ ու մինարե:

2

Արարատյան բարկ արեի չնչիցն արու—

Կյանք ե առել չքեղաշուք

Թիլդուշ թալար այգին հարուստ ու

վարարուն,

Յերկնելով միշտ վոսկի աշուն:

6

Ու վոստնել են թավիչ խոտի վրա թեթև—

Հարձ ու խանում լուսահմա,

Շատրվաններ են չողացել արևի դեմ—

Սաղաֆապատ թառի նման:

v

Ինչպես մի քյոչկ, — Հրազդան գետի ուսիցն  
առկախ,

Որորվել ե Յերևանը .

Վայելել ե ու վայելքիցն այնքա՞ն աղու  
Բորբոքվել ե Հասան խանը:

Տարածել ե կեսորը բարկ, — արև ու տոթ,  
Մուղեյինի աղանը ծույլ.

Նա դլուխներ ե թոցքել, վորից հետո—  
Իր մզկիթում իջել ե ծունը:

Իջել ե ծունը ու աղօթել իր Ալլահին՝  
Կապտակամար գմբեթի տակ,  
Վոր ստեղծի նոր առիթներ արյան, մահի,  
Կոտորածի խրախճանքը տաք:

Յեվ ուժ առած իր աղօթքից թել սոթտել,  
Վեր ե յելեր գոռ ու հպարտ,

Աշխատավոր բազմություններ ե մորթոտել—  
Ծունկը նրանց սրտին հպած:

Վայելել ե ճոխ պալատում որը իր բարկ,  
Արյան, կրքի բաղանիքում:

7

Յերկրում սիոնել կրկնապատիկ մահ ու  
զբկանք,  
Մորթաղերծում ու կեղեքում:

Հրազդան գետն ել պալատների վոտի մոտով,  
Մորմոքելով իր յերգը համը,  
Մերթ արյունով ե վարարել ու մերթ պղտոր—  
Գալարվել ե դանդաղ ու ծանր:

Յեվ տիրաբար նստած նրա ձախ ուսն ի վեր,  
Խնչպես թախթին բազմած խանը,  
Տարածել ե պարըսպակուռ ծանըր թևեր—  
Մարդարական Յերեանը:

ՅԵՐԳ ԱՐՅԱՆ, ԱՆԿՄԱՆ ՄԱՀԻ

1

Բոնկվել ե մեծ մի կոփկ ու սաստկացել  
Հովիտումն այս Հրազդան գետի,  
Դիմաղը են պարիսպները կնճռոտ ու ծեր,  
Մինչեւ իրենց քարը հետին:

Զարնվել են յերկու բանակ, իրար դիմաց,  
Թշնամական, իրարամերժ,  
Բոնակալի արնածարավ դեմքով համառ  
Մարտնչել են սուսերամերկ:

Մինչ արել հինա դրած միրուքն իր շեկ՝  
Լեռների բարձր կատարներին  
Քսելով ե տուն գնացել ու մինչ դիշեր,  
Մարտ են մղել նրանք ելի:

Մարտ են մղել աղահ (փառքի, շահի,  
վոսկու),  
Բոնակալներ յերկու յերկը:

Շուրջը սիռել արյուն ու մահ, քաղց ու  
սոսկում  
Յել տարիներ տեղի կոխվ:

Յեկել ե գոռ ու փառատենչ բանակը Ռուս,  
Ցարի դրոշն իր ուսերին.  
Յեկել ե վոր գերի անի ափն այս հեռու—  
Իր արծիվին ու իր սրին:  
  
Յել հասել ե մինչև բերդը Յերեանի,  
Ծանրակրան ու քարակող,  
Պարիսպների բոռնցքները վոր հետ վանի—  
Ցիցիանովը իր բանակով:  
  
Վոր գրավի, հավշտակի, առնի, գերի,—  
Բերդ ու պալատ չքեղազարդ  
Յել արյունոտ պատմության մի նոր եջ գրի—  
Իր ճակատին ազնվազարմ:

Վոր բաժանի (վորպես հատույց արյան,  
վերքի),  
Սպաներին այնքան աղահ,  
Դալարիրան հմայքներին այս Արևելքի,—  
Փերիները հարեմական:  
  
Հայացքները մզկիթներին կապույտ ու սառ  
Յել հաղթության կատարին սեղ,

Արյան մեջը թավալվել են քանի՛ դուսար,  
Փերիներն այն՝ դեմը տեսել,

Վորոնք նազուն պատրանքներով կարգել են  
սուտ

Նրանց մարմնին, գալարվելով,  
Ու շաչել են վերջին չնչում նիզակ և սուր—  
Մահամերձի խուլ ցավերով:

Քանի՛ սպա տապալվել են վիրապատառ,  
Հրամանն արնոտ չըթունքներին,  
Սակայն անթարթ իր կեցվածքով և  
Քարատամ—  
Դիմադրել ե բերդը վերից:

Տվել ե զոհ, տվել ե զենք, բերդը այդ հին,  
Նույնը խլել իր թշնամուց,  
Բայց ծանրածանը այնպես նստած ժայռե  
գահին,  
Մնացել ե խիստ և ամուր:

Նրա անթարթ իրանի դեմ հուսակըտուր,  
ինքն իրենից ամոթահար.

Հետ ե դարձել Ցիցիանովի բանակը լուռ  
Ու նահանջել ե դլիահակ:

Նահանջել ե կրունկի տակ չեն ու ավան  
Խորտակելով մինչև մոխիր.

Յեկ քչել ե ավարի հետ, վորպես ավար—  
Կին ու աղջիկ տրտմաթախիծ:

Յեկ խոստացած փերիների տեղ հեղանազ,  
Սպաներին ե շըպրտել—  
Աղջընակներ՝ մութ խուղերից բռնի հանաժ  
Ու կիները մեր դեղնագեմ:

Նահանջել ե նա լքելով քյոշկ, ասլարանք—  
Հաղթանակի խրախճանքի մեջ,  
Հետ տանելով ծանր մի թակիծ, խոկ ու  
վարանք  
Յեկ պարտվողի նըկուն մի դեմք:

3

Մզկիթներում յեղել ե տոն, աղոթք ու ծես,  
Հաղթանակի թափոր ու զոհ.  
Պալատներում մինչև գիշեր ու մինչև ծեփ—  
Թառի մըմունջը յերազող:

Յեկ պատել են փերիները՝ վոտքով թեթև,  
Վորպես պսակ՝ հյուսված կրքից,  
Հաղթողներին սիրո ժպիտ ու վարդ նետել,  
Նվազելով նրանց գրկին:

Յեկ հորդել ե, առատացել կիրք ու գրգիռ,  
Նվազի տակ ախորժալուր,  
Նոր փերիներ են կաքալել կրկին-կրկին,  
Գալարքներով խննի ու հլու:

4  
Թառը սակայն խեղդըվել ե իր հույզերում՝  
Թնդանոթի վորոտի տակ,  
Նոր բանակներ են շարքժվել գետեղըրով—  
Սարդարական հողը մտած:

Նույն դրոշով, ինքնավստահ, նույնքան  
գոռող,  
Դեմն իր՝ փառքի ակունքը ջինջ,  
Սկսել ե բերդի վրա մի նոր գրոհ—  
Զորքը իշան դուդովիչի:

5  
Սա յել զորք ե ավել, ու կյանք, ու մաքառում  
Յեկ մոլեղնել կովի կրքից,  
Բայց չի հարթել փառքի ճամբան իր  
Քարքարուտ  
Յեկ նույն ուղին բռնել կրկին:

Սա յել պարտված նահանջել ե գիսախըռիվ,  
Հետեւոմն իր՝ բերդը հպարտ:  
Սակայն նորից բորբոքվել ե մի նոր կըռիվ  
Ավելի գոռ, ավելի բարկ:

Արշավել ե իշխան իշան Պասկեիչը՝  
Իր բանակով գոռող ու մութ,  
Աւազնաթափ սըրի նման ծանըր իջել—  
Զորքի վրա իր թշնամու:

Զարնըվել են ծվատելով գրոշ ու փառք  
Ու ջերմացել արյան տենդով,  
Կուրծքը-կրծքի մաքառել են դոռ ու հպարտ—  
Հասան սարդարն ու Բեգենդորֆ:

Գալարվել են ծխի սյուներ դեպի զենիթ:  
Հրի խուրձերը խոյացող.  
Ամբողջ որը՝ խրախճանը հրադենի  
Ցել արևի դեմքն արնացուք:

Աղմկել են թնդանոթի վաթսուն յերախ,  
Պարիսպներից փողերը դուրս.  
Շառաչել են իրարու դեմ զենքու զրահ,  
Որհասական ու յեռանդուն:

Հաղթանակի ու պարտության:  
Խաժամուժութեամ—  
Զարնվեյ են ցերեկ, գիշեր.  
Մինչ ընկել են պարիսպները մութ ու խոժոռ,  
Կրծքապատառ ու արնաշերտ:

Յել իր փառքի բարձրությունից զիժել և  
Խաժամուժութեամ—  
Սարդարական Յերեանը.  
Դուրս ե նետվել չղթայակապ ու դերիվար—  
Գոսող սարդար Հասան իսանը:

Գ.

## ՄԱԳԻԼՆԵՐՈՒՄ

Իջել ե ծանր, նույնքան դաժան ու բռնակալ  
Ցարի թաթը, կրունեն ու սուր,  
Կեղեքումը՝ նույն ձևերով, նույնքան ազահ,  
Ծվատող ու մահասարսուռ:

Բարձրացել է ծեր արծիվը յերկողլսանի,  
Մազիլներով սուր արնամած.  
Տարածվել են սըրունգները կախաղանի—  
Մինչև վերջին գյուղն յերկարած:

Ու սահել են տիասնամյակներ ծանր,  
արնաներկ  
Մտրակի տակ սարսըռադին,  
Յերկրի սրտին կեղեքումի թաթն եր նըստել—  
Խաչապաշտ ու «քաղաքակիրթ»:

Հին քաղաքն ել՝ իր դարավոր թաղթին  
բազմած  
Կըքած կապույտ ժայռերն ի վեր,  
Ինքն իր վրա, վորպես հոկա մի դերեզման՝  
Տարածվել ե ու փըշրվել:

Բակում նրա՝ մաճի, բահի մարդը բանող—  
Տխուր մահն եր իր սակարկում,  
Իսկ նա, կյանքեր ու հասակները խափանող,  
Սավառնում եր խուլ, անհագուրդ:

Մարդը մաճի: Գաղթականը

գետնատարած,  
Ինքն իր մահին պլլված ամուր,  
Աչքերումն իր՝ ահազարհուր մի դատարան  
Բորբոքվում եր ահեղ ու մուժ:

3

Բակում նրա՝ իր մահվան մեջ դեռ «կենդանի»  
«Մեծ բարերար» թայիրյանի  
Կույր հայացքն ե հանվել մարմար  
պատվանդանին,  
Շղթայակապ ու «յերջանիկ»:

Ու նայում ե կույր այդ մարդը, նայում ե  
գեռ,

Պատրստելով բրոնզը մութ,  
Յեկեղեցու դոս հասակն ե կեցած իր դեմ  
Յեկ դարավոր գեճ ու մամուռ:

Իրար կոթնած, կանգնել են կույր յերկու  
արձան,

ՅԵՐԿՈՒ ԱՐՁԱՆ

1

Ու հոսել ե Հրազդանը հին դեպի Արաքս,  
Դվանալով վոտքը բերդի,  
Իսկ քիչ անդին՝ յեկեղեցի ու պատարագ—  
Խարիսկասակ, բութ ու մթին:

Իսկ քիչ անդին՝ վորպես մոայլ, թևատ մի  
բութ,  
Յեկ հոշոտող, և կեղքիչ,  
Կույր աչքերով իր որհասն ու մահն ե  
վողբում—  
«Սուրբ Սարգսի» յեկեղեցին:

2

Բակում նրա՝ յերեկ փոված եր մահադեմ  
Թշվառությունն այնքան ցըցուն:  
Ներսում մոայլ՝ շարականներ խունկ ու  
կանթեղ  
Յեկ ծընծղաներ մահի պես ցուըրտ:



Իրարընտել ու դրացի,  
Նրանք այստեղ, իրար դիմաց վեր  
բարձրացան—  
Մեր արյունից ու մեր հացից:

Յեկավ նրանց վորպես պատգամ, վորպես  
պսակ  
Յեռագույնը, կեղտու մի լաթ,  
Մառլերի շարականը, աղոթք ու զանդ  
Յեկ կործանում, վերք ու պալար:

4

Տիրեց ժահը: Աճեց աճը: Մահը աճեց—  
Աշխատավոր մարդուն պլլված:  
Մոխիր: Մինիստր: «Ազատություն» ու «Հայ  
քաջեր»  
Յեկ վորբերի շարքեր ճմլած:

«Սուրբ Սարդսի» մութ հասակի դեմը  
փոված—  
Արարատյան դաշտը ամուլ:  
Գյուղեր՝ մոխիր, խուղեր անդուռ ու  
կըծկված—  
Կործանումի դաժան քամուց:

Շընդշընդում եր կծղած արտը: Դաշտեր  
անցան,  
Յեռագույնի հովանու տակ:

Լայնանում եր, խորանում եր, վորպես  
պարծանք—  
Ազգամիջյան վիճն անհատակ:

5

Բզկտեցինք, մահվան տվինք մենք մոլեգին—  
Ծեր արծկվը, լաթն յեռագույն,  
Բզկտեցինք արնալըվա վերջին մագիլն  
Ու զորացանք նոր կրակով:

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Հրազդան գետի ձախ ուսն ի վեր նստել են  
դեռ—  
Բեկորները սարդարական,  
Դղյակների փշրանքները ու հաշմ բերդեր  
Կքել են լուռ ու արնաքամ։  
  
Նրանք կառչած հին պատմության եջերից  
մութ,  
Գըրկախառնված անկման, մահին,  
Խոռոչներից իրենց զանդի նայում են լուռ—  
Անցած արնոտ ճանապարհին։

II

ՀԵՐՈՍՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՓԱՌՔԻ ԽՐԱՄԱՏՆԵՐՈՒՄ

Ա

ՅԵՐԳ ԶԱՆԳԱԿԻ

Իր հին յերգով,  
Նուն յեղերքով,  
Զրի, ժայռի  
Զվարթ զանգով,  
Վոլորվում ե—  
Հոգնած Զանգուն։

Գիշերն անքուն  
Իր հոսանքում,  
Յերեկը դու,  
Վոլորվում ե—  
Այն հին Զանգուն։

Շուրջը նրա—  
Ժայռ ու քարափ,  
Դեմը նրա—  
Արտեր պարապ:

Զրի կապույտ  
Ցելթ ու չերազ,—  
Արարատյան  
Դաշտի միրաժ:  
Շուրջն արտերի  
Մաշը սառած,  
Քարակույտեր  
Չոր, ապառաժ,  
Փոթորիկներ  
Ավազաբաշ...  
Ցերաշտ...  
Ցերաշտ...

Սպանդենու  
Տենդը դեղին,  
Պապակ արտեր—  
Գոս ու լեղի:

\*\*\*

Արտերին՝ ջուր,  
Արտերին ճոխ  
Կյանքի խնճույք,  
Ու խըրինջուն

Զանդվիին՝ նոր յերթ,  
Զանդվիին՝ նոր յերգ,—  
Լուսակոհակ  
Արտ ու ափեր,  
Ծլարձակման  
Զվարթ ծափեր:  
—Զանդվիին՝ նոր յերթ  
—Զանդվիին՝ նոր յերգ:

ՅԵՐԳ ԱՌԱՎՈՏԻ

—Բայցվում ես առավո՛տ, սիրելի աչքի պես,—  
Այսպես ե յերգել մեր բանաստեղծը.  
Այդ առավոտաի բույրերով հարբել  
Յեկ քնարական յերգեր ստեղծել:

Իսկ այս առավոտը՝ բացվեց վորոտով  
Ու մեր բանակը՝ խրամներ առավ,  
Ժայռեր պատառեց գոռ ու անհողդողդ,  
Ժայռերի խորքով սլացավ առաջ:

Այն հին ձորերում, ուր յերկու բանակ—  
Իրենց կատաղի մարտերը տվին,  
Ուր արնածարավ դենքերը հանած,  
Իրար բաղխեցին սուսեր ու սվին:

Այդ նույն ձորերում,— ուր մարտի պահին,  
Ուր մարտից հետո և մարտից առաջ—  
Աշխատող մարդն եր շալրտվում մահին,  
Նրա արյունն եր հորդանում վարար:

Ուր դեռ տիսրամած նայվածքով մահու,  
Այդ հին որերին վորպես լուռ վկա,  
Իր բեկորներով զառամ ու զարհուր—  
Սարդարի բերդն ե ժայռերին կըած:

Այդ նույն ձորերում, դեմը այդ բերդի—  
Մեր խոյացումն ե դարերի դիմաց:  
Վորպեսզի ընկնեն ժայռերը խրթին,  
Պարիսպները հին ու բերդն այս հիմար:

Վորպեսզի յենի ու խոյանա վեր—  
Հոգնած այս Զանգուն՝ իր հին ընթացքից,  
Ու ծավալանան նրա բիլ թեեր՝  
Խնծղած արտերում, ուր ծիլը ծածկի:

Այս մարտը ուրիշ, խոյացող մարտ ե,  
Աշխատող մարդու մարտը վիթխարի,  
Նա՝ նոր աշխարհի հիմքերն ե բարդել  
Յեկ սլանում ե բարձր կատարին:

Նա ինքն ե կերտում իր նոր աշխարհը,  
Հիմքից քանդում ե հինը արնամած.  
Վճռական գրոհ, վերջին պայքար ե  
Ու տապալվում ե թշնամին համառ:

ՅԵՐԳ ՄԱՔԱՌՄԱՆ

1

Համայնական դաշտերից, գործարանից,  
քաղաքից,  
Յեկան խմբեր կառուցող, բերին մկան ու  
լարում.

Նրանց շուրջը՝ ժայռերի պարիսպները ահազին  
Ու խոր ձորում՝ հին Զանդիի նույն ընթացքը  
գալարուն:

Նրանք յեկան հանելու ջրերը հին տաղտուկից  
Ու նետելու դաշտերն այն, ուր յերաշան եր  
մորմոքում.

Նրանց կամքը ծանրածանը՝ հին ուղին այս  
արթուկեց  
Յեկ խորացավ խրամով՝ ժայռերի մեջն  
ահարկու:

Ու հին կոփին այս ձորի, մի դար առաջ և դեռ  
շատ,

Պատմությամբն իր ահարկու և նույնքան խեղճ  
ու տկար,  
Նրանց մղած մարտի դեմ— մնաց այնքա՞ն  
աննշան,  
Մնաց այնքան խաղալիք, անզորության լո՞ւ  
վկա:

Նրանք բանվոր, գյուղացի, կոմունիստ ու  
կոմյերիտ,  
Բոլշևիկյան դրոշով իջան կովի այս դաշտը՝  
Այդ դրոշը՝ հաղթության արդեն նշան եր  
լրիվ,  
Յեկ արևն եր շողջողում և առավոտը հաշտ եր:  
Նրանք յեկան քաղկոմից, շրջկոմներից,  
ըջիջից,  
Ինչպես կովի ռազմադաշտ— թշնամու դեմ  
դավադիր,  
Նրանք իջան խրամներ, հայացքներով բորբ  
ու ջինջ  
Յեկ հին ձորը պճնվեց հրաշքներովն իր  
անթիվ:

Նրանց շուրջը մեռնում են հին որերի հուշերը,  
Եեկոր-բեկոր ընկնում են իրենց դիրքերը  
լքած.

Փարատվում ե հին դարի դառնամբուր  
գիշերը,  
Մութ անցյալն ե կործանվում՝ մինչեւ վերջին  
թումբ ու քար:

Նրանց շուրջը, ուր թալար Քյոշկն եր նստել  
մի որ բիրտ,—  
Ծխնելույզներ են յելնում, առավոտի պես  
կյանքոտ,  
Դեմը նրանց ծփում ե Արարատյան դաշտը բիւ  
Համայնական արտերի կենսապարար  
ծփանքով:

Շուրջը նրանց յելնում են գործարանի նոր  
խմբեր,  
Քարե իրենց վոտներով—ամուր կեցած,  
անսասան:  
Այդ յերկաթն ե ձեռներում ձևեր առնում  
դյուրաբեկ  
Յեվ պողպատն ե վոլորվում, մկաններին  
հնազանդ:

Իսկ ժայռերը կապտաժեռ՝ տապալվում են  
վիրավոր,  
Նրանց հուժկու գրոհում—կորցնում են դիրք  
ու դահ,  
Ու մեռնում ե գիշերը, բացմում ե նոր  
առավոտ,  
Նոր գրոհներ են գնում և աննահանջ և ագահ:

### ԿԱՊՈՒՅՏ ՄԶԿԻԹՈՒՄ

Այնտեղ ոռոմբներն են ահազնում:  
Փլուզումն ե,—  
Կապույտ ժայռի, մութ անցյալի.  
Այստեղ կյանքը՝ թմրաթավալ յերազումն իր  
Տապըլտկում ե դեռ ձանձրալի:

Այստեղ կեսորն ե ծանրանում  
ծուլությամբ իր—  
Ծառերի շուրջ տրտմաթաթավ,  
Ավաղանն ե ծույլ ծփանքով փուշել աննիրէ,  
Քարակող ու սալահատակ:

Կարաղաջի բուները հին, դարակենցաղ,  
Հովանիով արևամերժ—  
Գուրդուրումն են կյանքը փուշած ծույլ ու  
ծանծաղ,  
Վերջալույսումն իր մահամերձ:

Յերկտակ խեցերն են կըծկվել, իրար հենված,  
Գանգերի պես խոռոշ աչքով:  
Անցյալն ե հին, պահում նրանց, վորպես  
Հենակ,  
Քետնաքարչ ու խարխափանքով:

Դերվիշներ են ապրել այստեղ գիսախոխիլ,  
Այս խցերում, և կույր, և ցած.  
Մերթ յերդել են զովքը շահի, ու մերթ լոիկ  
Հորանջել են մղլած ու ծանր:

2

Կապույտ մզկիթ: Գմբեթների կապույտ  
վերելք—  
Դեպի կապույտ ափը յերկնի:  
Հին մինարեն մաղլցում ե դեպի վերև  
Յել յերերվում: Ասես կընկնի:

Ասես կընկնի—զարկերիցն այն, վոր այնպես  
Հար

Շատանում են շուրջը նրա.

Յել վհատուն, սրտիում ե սարսափահար,  
Մահն իր կապույտ ճակտին դրած:

Բակում նրա—ավազանն ե թափալվում ծույլ,  
Արևելյան իր մեղկությամբ.

Յել հորանջով՝ նարդելելի մուժն են ծըծում—  
Մահանըման մի քանի կյանք:

Բակում նրա— լվացումն ե, ծես ու աղոթք,  
Յերերումը՝ մեղկ ձեռքերի.  
Քայլեր տարտամ, հայացքներ բութ, դեմքեր  
աղոտ  
Յել կականը մութ յերդերի:

3

Յերերում ե, ահա տեսէք, ահով կըռթնած  
Հենացուպին իր դողդոջուն.  
Աչքերումը, մուժն ե նստել մըթագնած,  
Կյանքն ե այնտեղ իրեն ջնջում:

Ծերուկ մոլլան այս խարխըլած,  
Ճերմակմիրուք—  
Յերերում ե ու կարկամում.  
Նա ապրելու գեռ մի քանի որ և մուրում,  
Դողդողալով մահու քամուց:

Իր հապաղուն քայլերովը՝ դանդաղ ու  
թույլ,—  
Կյանքի տխաւը այս կատարից,  
Դեպի մոայլ իր գերեզմանն ե քաշկըռտում—  
Մի գար և դեռ քսան տարի:

Մաղաղաթի նման դեղին ձեռքն իր բարակ—  
Դողդողագին շաբժում ե դեռ,  
Ու չոյում ե ճերմակ միրուքն այնքան վարար,  
Ծածանումով նուրբ ու թեթև:

Ու մտքերի մռայլ մուժումն այն յերազող—  
Ասես կյանք են առնում կրկին,  
Ու փովում են դեմն իր աչքի, — տաճար ու  
Վայելումի, յերգի, կրքի:  
Պոհ—

Նա հիշում ե վերիները ճերմակիրան,  
Նազանքներով խենթ ու նայիվ,  
Վայելումներ ու քնքանքներ յերանդ—յերանդ,  
Առավոտներ գարնանային:

Ու յերբ չոյում, փայփայում ե միրուքն իր  
Հին,  
Հուշերին այն կոթնած, անխոս, —  
Թվում ե թե քավում են դեռ իր ճեռներին  
Մարմիններն այն կրքոտ ու խոլ:

Թվում ե թե—իր միրուքի ճերմակ մուժում,  
Նա չոյում ե ազդբերն այն տաք,  
Վորոնք խայտում, անեանում են մշուշում—  
Իր նվազուն նայվածքի տակ:

Ինքն իր վրա խարխարանքով կքել ե լուռ—  
Դողդող մոլլան, դարը այս հին.  
Յերերվում ե, խարխափանքումն իր հեալով,  
Մաքառելով դեմը մահի:

Մութ գիշերից—մինչև կեսոր, մինչ յերեկո,  
Ականջներովն իր խլածայն,—  
Նա լսում ե վորոտումներ ահեղագոռ,  
Խորտակումներ հախուռն ու ծանր:

Ու չոյում ե հին միրուքի ճերմակը հին,  
Մութ աչքերում՝ ցոլքեր մեռած,  
Զոր բազուկներն ե կարկառում իր ալլահին,  
Աղոթելով ծույլ ու մոայլ:

Լսում ե նա վորոտումներ: Ասես մի պահ,  
Ուղեղի իր թանձր մթնում—  
Հազած, կապած հնամենի զենք ու զրահ,  
Հասան խանն ե քաղաք մտնում:

Ասես մի պահ, — վորոտիցն այդ հառնում են  
Վեր,  
Հասան սարդարն ու Մահմադ խան,  
Յեվ տիրաբար տարածում են ծանըր թեր—  
Կառափնատուն ու կախաղան:

Ասես մի պահ։ Յեվ հուզվում ե։ Ու  
ահապնած,

Դողդողագին յելնում վոտի,  
Վոր քայլ առնի, թշնամու դեմ կովի դնա,  
Վորոտի տակ թնդանոթի։

Բայց ընկնում ե՝ ինքն իր վրա,  
Խարխլակործան,

Ինքը իրեն անհույս նեցուկ.  
Ծածանում ե հին միրուքը հորձանք—հորձանք,  
Աչքերը իր՝ մահով լեցուն։

Յեվ վորոտում, դղբղում են չուրջն ու ափեր—  
Հաղթանակի ոռումքերի տակ,  
Բզկտմում են հին որերի կյանքն ու կապեր,  
Առոտակելով մինչև հատակ։

Այդ վորոտովն ահեղագոռ ու գեղեցիկ—  
Մեր բանակն ե այն սլանում։

Այստեղ մզկիթ, այնտեղ կքած յեկեղեցին—  
Առոտակումի յերգն են մանում։

36

### ՅԵՐԳ ՀԱՂԹՈՒԹՅԱՆ

Նրանք բանվոր, գյուղացի, կոմունիստ ու  
կոմյերիտ,  
Ճարտարապետ ու քարհատ, — մտան կովի  
այս դաշտը։  
Նրանց գրոշը հաղթության արդեն նշան եր  
լըրիվ,

Յեվ արեն եր չողջողում, և առավոտը  
հաշտ եր։

Նրանք հախուռն պատռեցին մղոնները  
ժայռերի  
Ու ցընցվեցին ծունկերը՝ յեկեղեցու  
առավինյա,  
Ուժանակի վորոտում—մեռան զանգերը լըռիկ  
Յեվ բբոնդասե արձանն այն՝ մահը լացավ  
իր վրա։

Դեմը նրանց բարձրացավ խաչերի խիտ մի  
անտառ,  
Մամուռ ու քոս և դեղին մեռելական  
բռւյսերը,  
Ծանըր նստած, ինչպես մահ, — մի առորյա  
բռւթ, անթարթ,  
Շիրիմների քարակոփ ու տըրորված ուսերը:

Հնամաշ այդ խաչերի ժանդակալած բռունցքի  
տակ—  
Գնդապետներ են կըքել՝ ձերմակ ցարի  
բանակի,  
Մերթ պսակ ե բարձրացել քարաքանդակ մի  
հրեշտակ,  
Մերթ ընկել են մամուռած մահարձաններն  
ահագին:

Նրանք ընկած ճանապարհ—դեպի փառք ու  
բռնություն,  
Սալոններից դուրս յեկան, թողած կին ու  
վայելում.  
Այստեղ զտան հանդբվան, —քարակույտ, կամ  
հողաթումը  
Ու բեկբեկուն արձաններ՝ փուլած Զանգվի  
հայելում:

Առան, հասան հաղթությամբ, —մինչեւ բերդը  
սարդարի,  
Վոր բեկորները ժողված, դեռ մնում եր  
գետափին,  
Վորպես հուշը՝ իր անցած արյունկըզակ այն  
դարի,  
Վորպես վերջին բեկորը՝ բռնության ու  
սարսափի:

Նա արյամբ ե շաղախվել, վոսկորներով  
բարձրացել, —  
Աշխատավոր մարդկության, ստրուկների,  
ճորտերի.  
Այդ արյունի լերդացմամբ՝ պարիսպներն են  
կարծրացել  
Յեվ հասակներն են ցըցվել հաստախրան  
բերդերի:

Փշուր-փշուր քանդեցին պարիսպներն ու  
բերդերը,  
Փոշուն տվին, ցըցին, անցյալը այդ  
արնակերտ,  
Մորմոքեցին պատմության խունացած այս  
թերթերը  
Յեվ խոյացումը նրանց— առաջ սուրաց  
անարդել:

Համառում եր խաչերի հին անտառն այդ  
մթնամաղձ,

Դեմ եր առել խոյացող այն բանակի  
արշավին.

Սակայն նրանք փշրելով դիմաղը ությունն  
այդ հիմար  
Նվաճեցին ճանապարհ— դեպի արտեր  
ծարավի:

Ու դանդերի վրայով հին ցարական ըանակի—  
Տարան ջուրը դեպի կյանք, դեպի փթթում,  
դեպի դաշտ,  
Ընկան խաչեր թևաբեկ՝ մահը առած շալակին:  
Նրանք առաջ սուրացին, հաղթելով խաչ ու  
յերաշտ:

3

Նրանք լուսե սրերով՝ պատըստեցին դիշերը,  
Ժայռ ու ափեր քանդեցին— արշալույսից՝  
արշալույս,  
Յըրիվ տվին մինչեւ մահ—քարափներն այս  
չերտ առ չերտ  
Յեվ սլացան հաղթության խրամներով  
քարքարում:

Արեւ հուր տեղաց բորբ ու քրտինքով  
ոծանեց—

Նրանց դեմքերը բրոնզե ու կրծքերը պողպատի  
Մերթ լուսաբիր յերկինքը՝ իր ժպիտները  
ցանեց,  
Յեվ աստղակուռ պսակներ հյուսեց նրանց  
ճակատին:

Անձրեսի թաց մտրակը՝ նրանց ուսերը ծնծեց  
Յեվ ամպրոպը վորոտաց նրանց գլխի  
վերևում.

Մերթ լուսինը կապույտից դառնաթախիծ  
հեծեծեց,  
Յեվ Մասիսը բարձրացավ մշուշների այն  
հեռվում:

Նրանք սակայն աննահանջ, նրանք սակայն  
աննըկուն,  
Գրոհ տվին ու կոփվ, առան պարիսպ ու  
բերդեր,—  
Այս ծերացած ափերում, ուր Զանգուն եր  
մորմոքում,  
Ուր անցյալը մեռավ լուռ, ուր Մասիսն ե  
ապրում դեռ:

Նրանք առան թումբ առ թումբ, նրանք առան  
քար առ քար  
Ու թուղ առան ավերն այս—ուժանակի զո՞  
թինդով:  
Նրանք առան բերդ առ բերդ, նրանք առան  
ժայռ առ ժայռ,—  
Յեռանդայեռ, անհողղող, զվարթաղեմ ու  
ինդուն:

2

### ՅԵՐԳ ԱՐԳԱՍԱՎՈՐՄԱՆ

Զանգուն շափշափով վաղը կը հոսի—  
իր նորանըվաճ ժայռակոփ ափով,  
կը լինի փըթթում—կյանքի, ակոսի,  
Յել առավոտը՝ կապույտ ու ծփուն:

Ու բամբակենու թփերը կանաչ—  
Արեին կերթան ծըփանքով նազուն,  
Յերբեմնի ամուլ հողից վեր հանած—  
Հասակներն իրենց՝ կյանքի յերազով::

Խնձղած դաշտերին՝ ծփանք ու դրու  
Յել հոկտեմբերի հաղթանակը վառ:  
Լենինյան դարի վճռական գրոհ—  
Սոցիալիստական հաղթության համար:

Ե

ՆՎԻՐՈՒՄՆ

Այն կուռ բանակին, վորն առավ բերդերը,  
Վոր Զանդվին տվավ նոր հուն, նոր ճամբաս, —  
Ահա իմ սիրու, սերս, յերգերս,  
Յել հաղթանակի ցընծություն ու փառք:

1932, ապրիլ-հունիս, Յերևան.

545

Page 55 4.

